

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

SOMMAIRE

PAGE

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. — 250ամեայ
աշխատանք 171

ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ

ԱՄՍՏՈՒՆԻ ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. — Հայ Կաթողի-
կոսական Աթոռին ինքնավարութիւնը (Ա-
ռաջին Հազարամեակ) 173

ԾԻՍԱԿԱՆ

ՃԵՄՃԵՄԻԱՆ Հ. ՍԱՀԱԿ. — Նորագիտ պա-
րականոն շարականներ (Ներածական եւ
բնագիրներ) 211

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՍԵԱՆ ՅԱԿՈԲ Ս. — Վարդան Այգեկցիին՝
նորայայտ երկերի լոյսի տակ (Ուսում-
նասիրութիւն եւ բնագիրներ) 233

ԳԻՒՐՏԵԱՆ Յ. — Գովեստի Ս. Աստուածածին
(Երկու անտիպ տաղեր՝ Առաքել Սիւնե-
ցիի) 278

ԼԵՋՈՒԱԿԱՆ

FEYDIT Prof. FREDERIC. — Le système
du verbe arménien classique 286

ԳՐԱԿԱՆ

Կ. Վ. — Մկրտիչ Պէշիկպաշեան՝ դասակա-
նութեան դէպի ռոմանթիզմ (վերլուծա-
կան նկատողութիւններ՝ մահուան հա-
րիւրամեակին առիթով) 330

ՇԻՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Հայրենիքի գործ
Հայրենեաց համար (Հայ իմաստութեան
պանդուխտ օջախին՝ Ս. Ղազարի 250ա-
մեակին) 374

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Հոգիներու
հանգրուան 375

ՄԻԹԱՐԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՒՆ

ԳԻՊԱՐԵԱՆ Հ. ԿԻՐԵՂ. — Միսիքար Սեբաս-
տացի եւ վենետիկ 357

ԱՆԹԱԲԻԱՆ Փ. Փ. — վենետիկի Միսիքար-
եանների հայագիտական գործունէութիւ-
նը 361

Հ. Ն. Տ. Ն. — Միսիքար Աբրահոբ վարդէն
դրուագներ ու խրատներ — երկու խօսք 402

Հ. ՍՏԵՓԱՆ ՎՐԳ. ԵՒԴՈՎԻԱՅԻ (1691-1756).
Դրուագք ի վարուց Տեառն Միսիքարայ
Աբրալի — Հիւանդութիւնք, խրատք, վեր-
ջին աւուրք կենաց եւ մահ նորա 404

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. — Հայոց կրդ-
գիին 250ամեակը (1717-1967): Է. Ս.
Ղազարի վերջին ընդարձակումը (1946-
1966) 433

ARTICLE DE FOND

DER-NERSESSIAN P. NERSES. — 250
ans d'activité 171

HISTOIRE ECCLESIASTIQUE

AMADOUNI MONS. GARABED. —
L'autocéphalie du Katholikat armé-
nien (Premier millénaire) 173

LITURGIE

DJEMDJEMIAN P. SAHAG. — Hymnes
arméniennes non-canoniques récem-
ment trouvées (Etude et textes) 211

PHILOLOGIE

ANASSIAN HAKOB S. — Vardan d'Ay-
ghek, sous la lumière de ses œuvres
récemment trouvées; Etude et textes 233

KURDIAN H. — Louange à la Sainte
Vierge (Deux odes inédites d'Arakel
de Sunik) 278

LINGUISTIQUE

FEYDIT Prof. FREDERIC. — Le sis-
tème du verbe arménien classique 286

LITTERATURE

G. V. — Mekertitch Béchikthachlian: du
classicisme vers le romantisme (Ob-
servations analytiques, à l'occasion
du centenaire de la mort) 330

CHIRAZ HOVHANNES. — Hors de la
Patrie, pour la Patrie (Au 250ème
anniversaire de St. Lazare, foyer de
la culture arménienne à l'Etranger) 374

HOVHANNESSIAN P. VAHAN. — Re-
pos des âmes (Poème) 375

ACTIVITE MEKHITHARISTE

KIBARIAN P. CYRILLE. — Mekhithar
de Sébaste et Venise 357

ANTHABIAN PH. PH. — L'activité ar-
ménologique des Mekhitharistes de
Venise 361

P. N. D. N. — Episodes de la vie de l'Ab-
bé Mekhithar — Introduction 402

P. ETIENNE DE THOKAT (1691-1765).
Description des maladies, des der-
niers jours de la vie et de la mort
de l'Abbé Mekhithar 404

DER-NERSESSIAN P. NERSES. — Le
250ème anniversaire de l'Ile des Ar-
méniens (1717-1967); VII. La der-
nière expansion de l'Ile (1946-1966) 433



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ-ԲԱՐՈՑԱԿԱՆ

(ՃԻՋ. ՏԱՐԻ (1968), ԹԻԻ 7-12

ՆՈՒՐՈՒՄ

ՄԻԹԱՐ ԱԲԲԱՅԻ

ԵՒ

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐ ԿՂԶԻ ՄՏՆԵԼՈՒ

250ԱՄԵԱԿԻՆ

Revue PAZMAVEB

CXXVI^e année (1968), N. 7 - 12

Numéro Spécial

Dédié à la commémoration

du 250^{ème} anniversaire

de l'entrée de l'ABBÉ MEKHITHAR

et des Pères Mekhitharistes

dans l'Ile de St Lazare à Venise

1717 - 1967



250 ԱՄԵԱՅ ԱՇԽԱՏԱՆՔ

Միսիբաբ Աբբայի եւ իր առաջին աշակերտներուն մուտք՝ Ս. Ղազարի սեմէն (1717, Սեպտ. 8), նշանակելի հանգրուան մը կը կազմէ՝ հայ վանակա-
նութեան եւ հայ մշակոյթի պատմութեան մէջ:

Այդ օրերուն, մինչ ազատագրական շարժումի պայքարներ կը պատրաստուէին փոքրիկէլ հորիզոնը մեր դրախտավայրին ու մեր սրբազան լեռներուն եւ ձորերուն մէջ՝ խրոխտ ամբակներ կու գային արշաւել, անկախ հայրենիքի ու ինքնավարութեան տենչերով առլցուն, Սիւնիքն ամբողջ դռըդելով Հալիճորի կտրիճներու խանդավառ ռզերութեամբ, անդին՝ Վենետիկեան լնակի խաղաղ ու ծիծաղկոտ եզերքին՝ անկախ ու փոքրիկ Հայաստան մը կը կազմուէր, Ս. Ղազար Կղզիին մէջ, Մխիթարի եւ իր առաջին աշակերտներուն ջանքերով :

Օտարութեան մէջ ծլարձակուող այս փոքրիկ Հայաստանը խորհրդանշելը պիտի ըլլար, կարծե՛ք, մեր ցեղի անմահութեան: Իսկ անոր պանդուխտ վանականները, իրենց հոգիին ու աղօթքին անբաժան մաս պիտի դարձնէին հեռաւոր հայրենիքը, իր դիւցազներով, տանարներով, խաչքարերով ու մագաղաթներով հնամենի:

Մի իրար արեան Միաբանութիւնը՝ իր պատմութեան 17րդ տարին կ'ար-
ձանագրէր այդ ժամանակ, երբ քաղաքական վերիվայրումներու հետեւան-
ալով՝ ստիպողաբար կու գար - 17 նուիրեալներով - իր փրկութեան լաստա-
փայտն որոնել Արեւմուտքի մէջ, հայրենիքի նուիրականութիւնն արծարծե-
լով Ադրիականի ափերուն, հայ ստեղծագործ հաննարին գորութեամբ:

Հայ վանականութիւնն ու հայ մշակոյթը վերածնունդի պարարտ հողը
կը գտնէին Ս. Ղազարի ամայի կղզեակին վրայ:

Հայ վանական նկարագրի իրաւ գիծերով բնութագրուած, միանձնական կեանքի ուխտանուէր ռոջակիզումով եւ վերանորոգ կանոնադրութեամբ կազմակերպուած, Ս. Ղազարի վանականները մանչցուեցան, ամէնէն առաջ, Արեւմուտքի մէջ, իբրեւ Հայ Վարդապետներ (Padri Armeni), ու մանչուցին Արեւմուտքին՝ հայ վանականութիւնը, հայկական ծէսի ամենահարազատ արտայայտութեամբ, ինչպէս նաեւ պահպանութեամբ հայ նուիրական աւանդութիւններուն, որոնք ժառանգած էին Լուսաւորչէն, Սահակէն, Մաշտոցէն, Նարեկացիէն, Շնորհալիէն:

Հայ վանականութեան հարազատ ապրումը՝ Կրօնի գերագոյն արտա-
յայտութիւնն ունեցաւ հոս. Աստուծոյ եւ եկեղեցիին ծառայութենէն ետք՝
Ս. Ղազարի Հայ վարդապետները նուիրուեցան Հայ Մշակոյթի վերածաղ-
կումին, եւ ատով՝ Հայ ժողովուրդի հոգեկան ու գրական վերագարքումին,
սփիւռքի վայրավատին բեկորներէն մինչեւ հայրենի գաւառներն անտէրունչ:

Եւ այսպէս, վանականութիւն ու մշակոյթ, կրօնք եւ Ազգութիւն՝ հրաշալիօրէն եկան համադրուիլ փոքրիկ Հայաստանի կամարներուն տակ, անձնանուէր ու եռանդուն գործունէութեամբը համեստ վանականներուն:

Վանականութիւն ու Մշակոյթ. այլ բառերով՝ կրօնք եւ Հայրենիք. ահա՛ Ս. Ղազարցիներու գաղափարական դրօշակին երկու գոյները:

Միտքաբար Արքաիայր սովոր էր իր աշակերտները խրատել, նմանցնելով զանոնք քոչուրի մը, որուն համար երկու քեւեր են հարկաւոր. սրբութիւն եւ գիտութիւն: Առաջինը՝ կրօնքի արտայայտութիւնն է, վանականութեան սերտ ապրումով. երկրորդը՝ Հայրենիքի արտայայտութիւնն է, մշակոյթի համապարհով: Եւ այս երկուսին քեւահարումով պիտի մախրէ՛, սլանա՛յ քոչուրը՝ Միտքաբեան առաքելը, Միտքաբեան գիտնականը:

Այսպէս չէ՞ր միտքէ հարազատ պատմութիւնն ալ մեր հայրենիքի փառապանծ վանքերուն, որոնք մշակոյթի որբաններ էին եղած ժամանակին, հազարաւոր ձեռագիրներով եւ հարուստ մատենադարաններով: Ժամագիրք ու Պատմագիրք, Նարեկ ու Խորենացի, երկու ոսկեգրքոյկներն են եղած մեր բոլոր հայ վանականներուն:

Երբեմն, մրագի լոյսով, այդ վանքերու սուրբ կամարներուն տակ գրքուած ու ընդօրինակուած են մեր Պատմագրքերն ու Յայտնաւորքները, մեր Հառքնտիրներն ու Շարականները: Այժմ, Ս. Ղազարի վանականները, Արեւմուտքի լոյսին տակ, պիտի գային հաւաքել, կազմել, դասաւորել հայկական ձեռագիրներ ու հմանքնի պատահիկներ, գերագոյն գոհողութիւններով. պիտի գային գրել, վերակազմել, հրատարակել Հայոց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, բանաստեղծութիւնն ու շարականը, քարգմանել մանաւանդ Հայոց գրական գանձարանը, հազարամեայ մեր մշակոյթը ծանօթացնելով Արեւմուտքի: Եւ հուսկ՝ ջանալով ստեղծել ծիածան կամուրջ մը հոգիներու միութեան, որ պիտի ըլլայ նուիրական ու գերագոյն ծաղիկը Հայոց կղզիին 250ամեայ աշխատանքին:

«Բազմավէպ»ի այս միացեալ բացառիկ քիւր, պատրաստուած՝ ազնիւ աշխատակցութեամբ Հայրենիքի, արտասահմանի եւ Ս. Ղազարի ուսումնասէրներուն – որոնց բոլորին կ'ուղղուի մեր ջերմ շնորհակալութիւնը – քող ըլլայ փոքրիկ ծաղկեպսակ մը Հայոց կղզիի վաստակաւոր Հայրերու լուսաշող նակատներուն, Միտքաբեան Միաբանութեան Ս. Ղազար կղզիին մէջ հաստատուելու 250ամեակին առիթով:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(ԱՌԱՋԻՆ ՀԱՋԱՐԱՄԵԱԿ)

Գրեց՝ ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ

Ա.

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԱԹՈՌԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

1. ՍԿՋՐՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Առաջին դարերուն, «Գործք Առաքելոց»ի վկայութեան համաձայն (Ի. 28), ղեկավարութիւն ունէին միայն եպիսկոպոսներ («ἐπίσκοποι»), լայն իմաստով՝ ընդգրկուած էին Ս. Հոգիէն՝ հովուելու համար Քրիստոսի հօտը, իբրեւ յաջորդներ Առաքելներուն, իրենց ղեկին ունենալով Հռոմի Քահանայապետը: Այս դասն էր՝ որ իրեն կը վերապահէր, աստուածային իրաւունքով, Եկեղեցին կառավարելու իշխանութիւնը:

Բուն «պատրիարքական» կոչուած աստիճանին չենք հանդիպիր:

Առաջին ժողովներուն, յաճախ ամէնէն ազդեցիկ եպիսկոպոսն էր, որ տարիքի բերումով կամ իր անձնական հեղինակութեամբ՝ կը նախադասէր, առանց Աթոռի նկատողութեան: Հետզհետէ, Երուսաղէմէն ետք, Արեւելքի միւս երկու գլխաւոր կեդրոններն ալ, Անտիօք՝ Ասորիքի համար, եւ Աղեքսանդրիա՝ Եգիպտոսի համար, իբր մեծ մայրաքաղաքներ, սկսան նախադասական պաշտօններ վարել: Այս-

պէս կազմուեցան երկու գլխաւոր Աթոռները, իշխանութիւն ունենալով իւրաքանչիւրն իրեն համապատասխան զոյգ աշխարհամասերու վիճակներուն կամ թեմերուն վրայ:

Դ. դարու սկզբնաւորութեան, Եկեղեցւոյ ազատ հռչակումէն ետք (313), Նիկիոյ տիեզերական Ա. ժողովին (325) չորրորդ կանոնը կ'ընդունէր Մետրապոլտական Աթոռներուն գերազանցութիւնը՝ եպիսկոպոսներու ընտրութեան մէջ. վեցերորդ կանոնով, նոյն ժողովը կը նուիրադրէր իրաւականօրէն նախադոյ կացութիւն մը, եւ կը ճանչնար Աղեքսանդրիոյ առանձնաշնորհութիւնները՝ Եգիպտոսի վրայ, նման անոնց, զոր կը վայելէր Հռոմը՝ Պատրիոյ մէջ. կը ճանչնար նաեւ Անտիօքի գերազանցութիւնը՝ Ասորիքի եւ Պաղեստինի համար, ինչպէս նաեւ արեւելեան ու դէպի հիւսիս երկարող հողամասին վրայ: Եօթներորդ կանոնը կ'ընծայէր պատուոյ նախադասութիւն մը Երուսաղէմի, ու կը ճանչնար բոլոր այս Աթոռներուն աւանդական իրաւունքները՝ իրենց սահմաններու թեմերուն վրայ. ճշմարիտ իշխանութիւն մը («ἐξουσία»):

Ժողովական նման ճանաչում մը կ'ընդգրկէր ոչ միայն վերոյիշեալ երեք քաղաքները, այլ նաեւ, պատմաբաններու ընդհանուր կարծիքով, Եփեսոսը՝ Ասիոյ համար, Հերակլիան՝ Թրակիոյ համար,